

Լուիջի դէ Գամայի անուան վրայ, տրուած 19 Յուլիս 1624ին⁶ :

ժամանակակից մը՝ Կղեմէս Գալանոս կը դրէ Չիտտադինիի այս նոր առաքելութեան մասին⁷ . «Ձեռնադրեցաւ եպիսկոպոս նախ Միրայ քաղաքին, եւ յետոյ Նախիջևեանայ գաւառին : Իսկ առաջ քան զղնալն յիւր եկեղեցին (ի Նախիջևեան)՝ զիմեաց ի Արեւմտեան Հնդիկս առ ի ժողովել զողորմութիւնս վասն պիտոյից եկեղեցւոյն իւրոյ : Բայց զբազում արծաթս եւ ոսկիս անդ ժողովեալ՝ մինչ զեռ յետս դառնայր յիտալիա, մեռաւ ընդ ճանապարհ ի Սպանիայ աշխարհին . եւ եթող զամենայն արծաթսն վասն հիմնելոյ Գպրանոցին Հայոց ի մայրաքաղաքին Հռովմայ, զորոյ շինուին այժմ՝ (1634^o) սուրբ ժողովիւ, որ է սակս Հաւատոց, խորհի ի կիր արկանել» :

Չիտտադինիի մահը պատահեցաւ 1627ին : Ակնարկուած գումարը, զոր հանդանակած էր յԱրեւմտեան Հնդկաստան, էր 2212 reale . զոր բերաւ հասցուց Հռոմ Ioan. Baptista Durali, ինչպէս կ'ըսուի Ս . ժողովի Գործոց մէջ⁸ :

Յայտնի չէ թէ Չիտտադինի ինչ արգելքի բախեցաւ ի Գոա եւ ինչ^o կը վերադառնար իտալիա :

Ս . ժողովը միւսանգամ դարձաւ նախկին՝ Գպրանոցը Հռոմ բանալու ծրագրին : 1627 Հոկ-

⁶ Prop. Lettere volgari, an. 1623—1624, vol. 3, f. 131.

⁷ Միաբանութիւն, Ա., էջ 525:

⁸ Acta S. C., an. 1631, sec. 170, p. 90.